

4/19



ԱՐՏ. ԳՐԱԿԱՆՆԻԹՅՈՒՆ

ՎԻԿՏՈՐ ՑՈՅ

ART GRAKANUTYUN

ՀԱՄԱՐԻ ՀԵՄԻՆԱԿՆԵՐԸ ԱՐՏ. ԳՐԱԿ. 4/19



Գուստավո Ա. Բեկկեր
«ԼՈՒՄՆԻ ԵՂՂԸ» էջ 2



Վիկտոր Ցոյ
պոեզիա էջ 12



Խուլիան Սանջա
«Ճանճեր» էջ 18



Սյուլզան Բարբա
պոեզիա էջ 30



Ջոզեֆ Հեյզր
«Ծուղակ 22» էջ 40



Էրրախիմ Գոլյեսթան
«Տղայիս հետ ճանապարհին» էջ 48



Փաբսիմա Մոջալեզի
«Մնացինք ես ու անավարտ պատմությունը» էջ 64




Չարլզ Սիմիկ
պոեզիա էջ 74

Արտասահմանյան գրականություն
հանդեսի 2019թ-ի համարների դայջեստ էջ 76

ԱԴՏ
Արտասահմանյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



grakanutyan
Art

№4, 2019

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
Հայաստանի գրողների միություն

**Հրատարակվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության աջակցությամբ**


Խմբագիր՝ Վահե Արսեն

Հրատարակիչ՝ «Արտասահմանյան գրականություն» խմբագրություն ՍՊԸ
Վկայագիր՝ 01մ 000018

Էլեկտրոնային հասցե՝ artgrak@yahoo.com

© «Արտասահմանյան գրականություն», 2019

ԽՈՒԼԻԱՆ ՍԱՆՉԱ (Ծնվել է 1988թ. -ին)



Խուլիան Սանչան (Կադիս, 1988) իսպանական բանասիրության թեկնածու է, իսպաներենի դասախոս և հետազոտող: Աշխատում է Կադիսի համալսարանում և համագործակցում մի շարք կազմակերպությունների հետ որպես խմբագիր և լեզվաբանական խորհրդատու: Ապրել է Եվրոպայի տարբեր երկրներում: Իր իսկ վկայությամբ՝ մեծ կիրք ունի գրականության, փիլիսոփայության, կինոյի հանդեպ, բայց առավել պաշտում է սպիտակ թուղթը, որի «դատարկության վախից» (horror vacui) ծնվում է նրա ստեղծարար բնազդը՝ փոխադարձաբար կապված մասնագիտությանը և գեղարվեստական ստեղծագործություններին, որի հետևանքով չի դարարում անընդհատ մշակել գիրը: Խմբագրել է «Չոմբիները կարդալ գիրը: Ընդհանակ է պատմվածքների, որոնք տպագրվել են տարբեր անթոլոգիաներում: Նրա ստեղծագործությունները տպագրվել են բանաստեղծական ժողովագրում և ամսագրերում «Լիսաբոն» (Lisboa), («Մարտնազնում» ամսագիր, Օվիեդո, 2018թ.), «Ըարվածներ» (Golpes), («Ծխի տեսրեր» ամսագիր (Cuadernos deHumo), Լյու Յորք, 2018թ.) և այլն:

«Սիլուետներ»-ը պատմվածքների նրա առաջին գիրքն է:

Ճանճեր

Քանի՞ ճանճ էր: Պրոֆեսորը կորցրել էր հաշիվը՝ դրանք այդքան հաշվելով: Չէր հավատում այն ամենին, ինչ հանկարծ հայտնվել էր իր աչքերի առջև: Ամբողջ երեկոն ուրիշ բաղաբուն՝ պատշգամբի դուռը բաց և որպես հետևանք՝ մի ամբողջ տուն՝ պաստառապատված ճանճիկներով մութն ընկնելուն պես: Կարող էր մի բիրիլիական աղետի գոհ դառնալ: Անիծեց այդ պահը, երբ միտք հղացավ օդափոխել չորս պատը, որոնց մեջ ապրում էր ջերմաստիճանի անկասելի բարձրացման պատճառով: Նուստալգիկ Պորտուգալիայի թաքնված այդ սարում մնալը կարող էր դժվարանալ: Լսել էր պատմություններ տարածաշրջանի միջատների մասին պորտուգալական հողին ոտքը դնելուն պես, բայց մինչ այդ պահը դրանք նրան այլ բան չէին թվում, քան լեզենդներ: Երկար ձմեռը ցավազրկող ազդեցություն էր թողնում նրանց վրա, ովքեր չէին ուզում առերեսվել ճշմարտությանը: Նախորդ օրերի խոնավությունը և դրսում գրեթե 30 աստիճան շոգը այժմ ստիպեցին նրան առերեսվել դրան:

Մի սառը ցնցում անցավ բոլոր ողերով՝ ասես նախանշելով սպառնալի ինչ-որ բան: Ի՞նչ կարող էր անել: Վազելով նետվեց մահճակալներից սավանները քանդելու և ապա հեռացրեց խոհանոցի ու սրահի սեղանների բոլոր օգտակար իրերը: Մտավ լոգարան և այնտեղ նույնպես հայտնաբերեց հարյուրավոր այդ ճանճերից թառած պատերին ու առաստաղին: Որոշներն անգամ հասցրել էին գրոհել հայելու մի մասը, որտեղ այժմ արտացոլվում էր սարսափազդու կեցվածքը: Ի՞նչ էր արել սրան արժանանալու համար: Քանի որ նախորդ աշխատանքային օրվանից հետո հոգևած էր, գիտեր, որ չէր քնելու մինչև ուշ գիշեր, գիտեր, որ նրանց դեմ կօգտագործեր թույնը, ինչպես մտադրվել էր: Գունատ դեմքով վազեց մինչև պահարան, որտեղ մաքրող միջոցներն էին: Հենց այդ պահին էր, երբ ինչ-որ տարօրինակ բան տեղի ունեցավ:

5 ամիս առաջ

— Կա., քեզ դո՞ւր են գալիս աստղերը, — նրանից առեղծված խնդրեցի, մինչև նա ժպտում էր լուսնի և աստղերի արտացոլանքի տակ, քանի որ ցանկասեր կծում էր շուրթերը: Հինգ բույն էր, ինչ ծանոթացել էինք և հատել էր դռան շեմը, որը նրան ասես ուղղորդում էր դեպի իմ անկողին:

Կարիք չեղավ, որ պատասխաներ: Ձեռքերի ջերմությունն ու զրգռված շուրթերը կարծես եկան հարկադրաբար և անասնձ՝ որպես մի տարածություն, որը պիտի ճամփորդեր պատշգամբից մինչև մահճակալ, որտեղ քրտինքը, ցանկությունն ու տենչանքները պիտի սպանեին նման գիշերներից մեկը շատերից մեկը, որոնց արդեն որքան ժամանակ է՝ ընտելացել էի: Գայթակորության հեշտ խաղ, հայացքներ և վստահություն, ինչը և ցանկանում էր, բայց ոչ երբեք բացահայտող բառեր, ոչ երբեք պլաններ առջևում՝ չնայած ամեն ինչի ակնհայտությանը, ավելին անելու կարիքի բացակայությանը. միայն հոտոտել քո մարմնի տարբեր սանտիմետրերը՝ հասկանալու համար այն, ինչ կատարվում էր: Վերջիվերջո, նույնը, ինչ կատարվել է շատ դարեր ու հազարամյակներ ի վեր մարդու հետ:

— Մո., տո՛ւն ես գնալու, — հարցրի՝ զիտակցելով, որ չէի ուզում, որ զիջե-
րը հետս անցկացնեիր:
Վարտիքները, իրականում, ամբողջ հագուստը անկանոն նետված էր բազ-
մեցի, կահույքի ու գորգի միջև: Կրծկալը թեթևորեն ընկել էր հեռուստացույցի
վերևում, կարծես այդ զիջեր բոլոր իրերն այլ իմաստ չունեին, քան նրան օգնե-
լու, որ հանվի: Գաղտնիքը լավ էինք թաքցնում, այն գաղտնիքը, որն այժմ եր-
կուսով պետք է պահպանեինք, քանի որ գիտեինք, թե որքան փխրուն է
հավատարմության զիծը, երբ տեսչանքը չափազանց ուժգին է: Նա շարունա-
կում էր խաղալ իմ մազերի հետ: Շոյում էր դեմքս, քանի որ քունը բնավ չէր տա-
նում:


Կյանքի ընթացքում արդեն շատ անգամներ էի հայտնվել նման անհար-
մար իրավիճակում կարծես չիմանալով ինչ լուծում տալ, բայց այս մեկը դի-
մադրում էր: Շատ հավանական է, որ հույսի ակնարկ էր փնտրում, գուցե
հնարավորություն՝ փրկագնելու ինձ այն կյանքից, որը վարում էի՝ իր գրկում
կամ սիրո մեջ հայտնվելու նպատակով:

Հավանական է, որ շատ կանայք փորձած լինեին դա անգիտակցական խա-
ղի մի տեսակում՝ այն ըմբռնման մեջ, որ խոստում տալու ցանկություններս բա-
վական ծույլ էին, և որ ամեն բան պարզ էր ի սկզբանե: Մի պայթյալ
դիրքի ժողոված տիրապետման լարերով՝ ակնհայտորեն հետամուտ սիրային
տիրություն ստատուս քվոյի պահպանմանը: Բոլորը՝ առանց բացառության,
միշտ պիտի փորձեին խոսակցություն վարել, որով քեզ կհոգեվերլուծեին, որով
կհասկանային ինչո՞ւ և կմասնավորեցնեին, թե կարող եմ փրկվել, թե հանկարծ
որևէ հավանականություն լինե՞ր մի նոր պատմության փայլաթիթեղ պրոյեկտե-
լու կամ նոր ճանապարհ բացելու: Նրանց բառերում կարելի էր գտնել ջերմուք-
յուն ու գորով, ինչպես նաև՝ անկեղծության մի անմիտ քանակ, որը,
վստահաբար, շատ դեպքերում կարող էր շփոթմունքի հանգեցնել: Արդեն զի-
տեր դա, բայց լավագույն խաղաթուղթն այն է, որ երբ մեկը տեսականորեն ու շա-
րունակաբար փորձարկում է հրապուրանքի ու զավթելու խաղը, չես ստում:

4 ամիս առաջ

Զբոսնում էր սարով՝ ինչ-որ կերպ կարգի բերելով մտքերը: Մինչ պրոֆե-
սորը շարժում էր ոտքերը՝ մեկը մյուսի հետևից քայլերի հաջորդական շղթա-
յում առանց կոնկրետ նպատակի, մտածում էր անցած տարիների ու այն քիչ,
բայց հարստացնող դեպքերի մասին, երբ իր կյանքը պտտվել է մի մարդու
նկատմամբ սիրո կայունության շուրջ: Կարոտում էր դա և գիտեր, որ գերագույն
զգացողություններից է, որը մարդը կարող էր ապրել, բայց երկար ժամանակ
էր, որ իրեն սովորեցրել էր և ստիպել, որ պետք չէ դա, որ պետք չէ անել դա,
քանի որ միշտ կսխալվեիր, որովհետև մասերից մեկում միշտ կվերջացնեիր կոտր-
ված սրտով և շատ հավանական է՝ հիասթափված: Վերջին հաշվով սերն
սկսվում է քեզից, իսկ սերը ուրիշի նկատմամբ կամ թե օտարի, պետք է մյու-
սի ձեռքբերման կամ մնայունության լրացումը լինի, այն, ինչը մեզ դարձնում է
հանճարեղ ու եռանդուն: Ըստ այդմ էլ՝ սխալ կլինեիր սկսել ցանկացած տիպի


լուրջ հարաբերություն մեկի հետ միայնության՝ որպես սև խոռոչի սխալ ընկալման հետևանքով: Պատմության ու մշակույթի շատ դարեր ձևավորել են այդ գաղափարը, որ «մենակ լինելը» հավասարագոր էր կամ ապագայում հավասարագոր կլիներ կեցության ձախողման: Այնուամենայնիվ, կյանքն այլ բան պետք է լիներ: Չէր կարող կորսետավորվել մի մաթեմատիկական այդքան պարզունակ բանաձևի՝ այդքան խեղճ հավասարման մեջ: Այդպես արդյունքում ամեն անգամ ավելի էր դժվարանում «Նրան» գտնելը: Դա միշտ ուղղորդում էր մի ուրիշ հարցի՝ ի՞նչ կամ ո՞վ էր Նա՝ մյուս բոլորի հանրագումարը, թե՛ ինչը դուրս կգար այդ հանրագումարից: Արդեն գրեթե մոռացել էր այս մասին, երբեմն անգամ մտածում էր, որ խնդիրը «նրանք» չէին, այլ հենց ինքը, չնայած բնությունը միշտ հանգուցալուծում էր, որ ոչ... էթե՛ Նա եղած լիներ, ուրեմն ինքը կիմանար, քանի որ նման բաները մի հարվածով հեռացնում են մյուս բոլորին, հարթում են իրենց ճանապարհը և խարսխվում հիշողության մեջ, ինչպես ծովն է ներթափանցում ժայռերի մեջ: Ընդհանրապես բոլորն էլ փայլում էին, ինչպես ոսկեգօծ արևի լույսի ներքո ամառային օրը: Այդուհանդերձ, հաճախ մոտ և անմիջական զրույցներում մեր պրոֆեսորն իրեն ճարտար էր զգում՝ ձախողում որոնող մասնագետ, ինչը ստիպում էր չմտածել Նրա մասին՝ որպես մի տարբերակի կամ ապագայի, մի ծրագրի կամ մխիթարության այն բանի, թե որտեղ է մնալու կամ որտեղ է, ի վերջո, համագոյակցելու:



— Վա., ավելի լավ է՝ ամեն բան այստեղ թողնենք: Ամեն ինչ շատ բարդ է...,— իմ բառերը խեղդվում էին դանդաղորեն, ինչպես շաքարի խորանարդը մի բաժակ ջրում:

Գուցե ամենաանկեղծ կապը չէր, որովհետև արդարացումն այս անգամ ընտրված էր հարաբերությունները չջարունակելու և տարփանքի մի գիշեր երկարաձգելու համար, ամենահստակը չէր, թե՛ն իրական էր նույնպես: Խուճապ ունեի՝ զգալով, որ մի կին անգիտակցորեն պատասխանատվություն է ինձ պարտադրում, իրեն սիրելու պատասխանատվություն՝ իր տիեզերքի հավասարման մեջ մի տխրահոշակ ընտրության շրջանակում: Չէի ուզում մտավոր բեռներ: Փորձ և խոհեմություն ունեի փախուստի մեքենայացման հարցում՝ նրանց ասես ինձ ենթարկեցնելով:

— Բայց... Բայց, սիրելի՛ս, քավ լիցի, չեմ ուզում, որ քեզ ճնշված զգաս: Այնպես չէ, որ պարզապես «մեկին» ունենամ, բանն այն է, որ ապրում եմ նրա



հետ... հարբեր պատ-
ճաններով դեռ որս ա-
նում են, բայց բռնի
ամիս է կոխում են,
որովհետև սերս չեն
անում, որովհետև
ինձ չի հետաքրքրում
...

Չ ա խ ո ղ ո Ւ մ :
Փնտրածիցս ավելի
ինժոքրացիա:

Երա բառերը
լուծվում էին, ինչպես
թուլացած հնչյունը
հեռավորության վրա,
ինչպես այն աղմուկ-
ները, որոնք հանկարծ
մեզ են հասնում մեր
գտնվելու վայրում, և
մեր միտքը փոխադ-
րում բոլորովին այլ
տարածությունն՝ պա-
տասխանատվույթ-
յամբ և հետևաբար
վախով լի մի տա-
րածք, որտեղ Լա կա-

րող է մտածել «նրան» փոխարինել ինձնով, անգամ եթե ավելին չէի, քան մի
գիշերվա սիրեկանը, անգամ անտեսելով, որ ժամանակն անցնում է և մեր մեր-
ձեցումը միշտ վերաձևակերպում է որպես «ժամանակավոր» մի բան կամ
«լուրջ ոչինչ»: Հոտառական կարողությունները զարգանում են օժանելիքների
հետ, մինչ անցնում է ժամանակը, նույնն էլ՝ գինու կամ մարդկանց դեպքում է:
Փայտը, պտուղը և հիմնաթթուն այլ նրբերանգներ են ձեռք բերում, զարգա-
նում փորձագիտական հոտառությունը, և դու սովորում ես տարբերել կեղծի-
քը իրականից, բառերը՝ փաստերց: «Լուրջ ոչինչ չեմ ուզում» արտահայտության
կես ճանապարհին մեկը կարող է անվերադարձ կապված լինել քեզ: Լեզուն՝
այդքան կատարյալ և միևնույն ժամանակ այդքան անսիրտ անարտահայտե-
լիս արտահատելու և հատկապես, մեծ մասամբ՝ կատարյալ գործիք մեզ շփո-
թեցելու համար:

...

— Օլ., դու մյուսներից տարբեր ես... Համոզված չեմ, որ սիրում եմ քեզ,
բայց կարող եմ ասել, որ կորսվածս մի այլ բան է զգացել քեզ հետ: Տեսնե՛ք ուր
կտանի մեզ այս ամենը, լա՛վ: Առանց ճնշումների, առանց խոստումների:
Միշտ, միշտ՝ առանց պարտավորությունների, ոչինչ, ինչը կվախեցնե՛ր

ինձ: Ոչինչ, ինչը կբուրեր, ինչպես կրկնվող օժանելիքը կամ մեկը, որը կբարձեր իմ ուսերին իր հաճույքն ու իր ցավը: Թեև այդպես երբեմն հայտնվում էր մի մարդուկ, որն ինձ ինչ-որ մեկից վերհուշ էր բերում... որն ինձ այս դոնժուանական կամ սրիկայական կյանքում, որը սովորել էի վարել, ստիպում էր սասանել երբևէ ոչ մի կայարանում չկանգնելու գաղափարներս, քանի որ ճամփորդությունը միշտ շատ ավելի գրավիչ էր, քան մի տեղում գամված մնալը: Մտքումս միրածներ կային, հնարքներ, որոնք ուղեղս ինձ համար նախապատրաստել էր ժամանակի փոքր չափաբաժնում ինձ մարդ զգալու համար, թեև լինեք ես մի հերթական սուտ:

Հոտ քաշեցի նրա մազերից ու գրկեցի, նրան քնքուշ համբույրներ տվեցի, մինչ հեռվում արևն ընկնում էր հորիզոնի գծի վրա: Չէր գիտակցում, որ ինքս էի ինձ ստիպում սիրահարվել, երբ հազիվ երկու անգամ էի տեսել նրան, երբ չգիտեի՝ դո՞ւր է գալիս ինձ իսկապես:

— Նորից կհանդիպենք... Կխոսենք ամեն օր: Չենք մոռանա մեկս մյուսիս: Մի բան կառուցելու համար պահանջվում է համբերություն և մի քիչ ժամանակ, պահպանման խաղ ու հաճույք :

Նա համաձայնում էր գրեթե ինչպես սիրահարվածը՝ ասես առանց հավատալու դրան՝ անդյուրահավատորեն դյուրահավատ, մինչ սեղմում էր ձեռքս և իր բիբերի միջով տոննաներով տենչանք էր արձակում: Մեկն առանց ցանկանալու հունի մեջ էր դրել ստախոս լեզվի նույն գործառույթները, երբ խոսում էր զրո խոստումների մասին և ստեղծելով արդեն մի բան իր ու այլ մարդու միջև: Որովհետև թվում էր, թե, ի վերջո, անկախ նրանից, թե ինչ կստացվի, միշտ հետևանքներ կան:

Աստված, ի՞նչ էի անում... Արդեն միայն Վա.-ն չէր, այլև նրա լավագույն ընկերուհիներից մեկը ես անկողնումս... թեև ոչինչ չէի ուզում անել՝ գուցե մի վերջին հարգանքով պայմանավորված կամ գուցե ակնոհուր նույնպես խառնում էր իմ մտքերն ու գործողությունները: Սկսնակի սխալ էի գործել, քանի որ հնարավոր չէր, որ մեկն ապրի հաճույքի աշխարհում՝ առանց ցավ պատճառելու մեկ այլ մարդ արարածի: Մի քիչ սիրաբանել և գնալ քնելու՝ կուբատայի¹ ու գիշերվա շնչով, վերջին պարի քրտինքով:

Քնելուց առաջ փակեցի աչքերս ու հայտնվեցին մտքումս Վա.-ի, Մո.-ի, Վա.-ի դեմքերը, բայց նաև Ռի.-ի, Մո.-ի, Ան.-ի, Խո.-ի, ինչպես նաև մի երկար «և այլն»-երինը, որոնք սովերում էին ուղեղիս ամպամած վարագույրները: Գիտակցում էի, որ շատ տարիների ընթացքում զարգացրել էի բոլոր հաղորդակցական կարողություններս, եմոցիոնալ բանականության տարատեսակներս, որոնք այժմ ինձ ստիպում էին կառավարել իրավիճակները, ինչպես ուզում էի՝ բազեի արագությամբ, որը թոչում է իր որսի գլխավերևում՝ որպես տենչանք կամ քմահաճույք հասնելով այն սահմանագծին, որը միայն ես ցանկանայի: Երբեմն ապրում էի այն զգացողությամբ, որ վերածվել եմ մի մեքենայի, որը մոռացել է ինչպես սիրել, որը ձևավորվել է, ինչպես լեհ սոցիոլոգի՝ այն հայտնի *հեղուկ սիրո* տեսության մեջ բավարարելու միայն ցանկությունները: Բայց կարո՞ղ էր դա ճիշտ լինել... Համոզված էի սիրելու՝ մեծ կարողությո-

¹ Ալկոհոլային խմիչք:

յանս մեջ, որն ունեի ներսումս, որը փորձարկել էի տարբեր իրավիճակներում, բայց սովորությո՞ւր և տարբերակների կրկնությունը մարդուն ստիպում են կատարել կածի տակ դնել իր բնությունը այնպես, ինչպես և ամենը՝ մեր ծնվելու րոպեից սկսած մինչև այն պահը, երբ մահանում ենք: Ընկավ լուսինը պատշգամբի վրայով, և գիշերը՝ մի գիշեր ևս, անցավ նրա հետ:

Այն ծխախոտի ծուխը՝ մարիխուանայով լի, նրան նետել էր բազմոցին մի քանի րոպե, որոնք նմանվեցին ժամերի:

— Գրողը տանի, Պ., փոխանցիր գինու գավաթը: Մա ինձ շատ ուժեղ է խփել ու մի պահ այստեղ կմնամ:

— Ինձ էլ է ուժեղ խփել: Ինչպես քեզ ասում էի...

— Ի՞նչ:

— Հենց դա... ուրեմն՝ ի՞նչ:

— Ես էլ չգիտեմ, եթե դա այն է, ինչ ինձ հարցնում ես: Հիմա կանգնեմ: Պրոֆեսորը ոտքի ելավ, մինչ ընկերը իր դիմաց ծիծաղում էր վրան:

— Լոլիկի ես նման, ապեր:

Երկուսով վազեցին դեպի լոգարանի հայելին՝ դիտելու համար իրենց տեսքը. կարծես դեռահասներ լինեին, որոնք հենց նոր բացահայտել էին կախարդանքը կամ տիեզերքի հետ հարաբերվելու այլ ձև:

— Արի փովենք մահճակալին ու հինգ րոպեից վեր ենք կենում: Մա այդքան ուժեղ լինել չի կարող: Մինչև անգամ ոտքերս են ցնցվում:

— Արի, — վճռեց պրոֆեսորը, մինչ ընկերն արդեն հանել էր իր կոշիկներն ու մեռյալի պես ձգվել դռնակի վրա: Բայց մի մեռյալի, որը ծիծաղում էր... Հանկարծ սկսեց կանգնել մումիայի ջանքով: Մինչ այդ ընկերը շարունակում էր տեղավորվել բարձերի միջև: Ոտքի ելավ ու սկսեց խոսել վահեցածի կամ թե կախարդվածի պես.

— Էհ, զգացի ր սա: Չէ՛, չէ՛, լուրջ, նայիր, ինձ ավելի փոքր չե՛ս տեսնում, ավելի չե՛մ փոքրանում, գրողը տանի Պ., ինձ նայիր:

Ընկերը չէր դադարում ծիծաղելուց, մինչ նա դառնում էր ավելի փոքր, իսկ ոտքերի ձգողականությունը գումարվում էր մկանային թուլությունը և ծնկի բերում՝ առանց գիտակցվելու, թե ամեն անգամ էլ ավելի է մոտենում հասակին: Ծնկի էր իջնում:


Այն տեսարաններից էր, որը պիտի հիշեին շատ ավելի ուշ՝ ծիծաղների ու գինու միջից ցանկացած իրիկնամուտի:

Գինին ու ծխելը նրանց թողել էին կիսացավազրկված, և նույնիսկ չէին կարողանում կապակցել արտահայտությունները, քանի որ իրենց հիշողությունը կարճ ժամանակով սկսել էր քնած լինելու ախտանշաններ դրսևորել, այնպես որ երկխոսությունները ավելի շուտ կարող էին նման լինել աբսուրդի ժանրի թատերական գործի, քան բուն իրականության:

Երբ երկուսով կարողացան վեր կենալ հաղթահարած «վախը», թխվածքաբլիթները և զեյթունները կարևորվեցին սեղանի վրա, որովհետև ոչ մեկը դեռևս չգիտեր պայքարել ամենակուլ սովի դեմ, որը վրա է հաս-


Խում այդ ժամերին:

Մտախոհությամբ կր ինչ որ բան «մեկի հետ», բայց շարունակում էր ճանաչել այլ կանանց, բանի որ ցանկությունը գերակա էր «բուրգոյապետական դիտարկումից», որն ասում է, թե կարելի է երջանիկ լինել հետազոտելով ջուրը, բայց չլողալով և չցանկանալով դատարկել: Որովհետև չնայած չէր կարող լինել աշխարհի բոլոր կանանց հետ, որոնք նրան գեղեցիկ ու ցանկալի էին թվում, մեծ հաշվով մեծ էր նրանց տիրելու հավանականությունը: Բացի այդ՝ անկախ նրանից, թե ինչ կասեին ընկերները, նա սիրահարված չէր, պայման չէր կապել ոչ մեկի հետ և ոչ էլ երջանկություն էր խոստացել որևէ մեկին: Կարող է թվալ, թե բանականությունն ու բարոյականությունը այլ կողմով էին անցնում, բան բնագոյն ու զգացմունքները, ինչպես վերջին ժամանակներում լավ ապացուցել են շատ նեյրոգիտնականներ: Ի վերջո, թվում էր, որ դժվար կլինեիր գապել կենդանուն, որը բոլորս ունենք մեր մեջ: Պետք է շատ վստահ լինեիր մի բանում, որ խուսափեիր և գոհաբերեիր վայելքի հսկայական առաջարկը, որը միշտ կար աչքերի առաջ և իր գրկում, շատ վստահ մի բանում, ինչը վստահի տակ է դնում մնացած ամեն ինչ և այն էր, ինչը մինչև այդ օրը դեռևս չէր եղել: Բայց մեկի հետ մի բան ստեղծելու միամիտ պահն էր:



Մի շաբաթ էր պակասում նրան կրկին տեսնելուց և գիտեր, որ դա լինելու է կրակի փորձ, որոշիչ պահ, որով կստուգեր, թե այն նախնական ինտուիցիաներն արդյոք ճիշտ էին: Բայց չիրականացավ... Իհարկե՛ ոչ:

Այստեղ, երբ արդեն Նրա առջև էր և, չնայած առաջացող ցանկությանն ու հոգատարությանը՝ մի բան ձախողվում էր. գիտեր, որ խնդիրն իր մեջ է, և որ չէր կարողանում Նրա մեջ տեսել ավելին, քան մի բանի գիշերները և գապանակները թռչել ստիպող մահճակալը: Պատրանքը փշրվեց, թեև ակնհայտորեն չէր եղել ոչ մի խոստում: Մի արցունք, մեղավորության մի զգացում: Զգացմունքները դյուրին չէին..., և ճշգրտորեն նման բաների պատճառով պրոֆեսորը նախընտրում էր միշտ ավելի զգուշավոր լինել և չնկարագրել զգացմունքները կամ զգացողությունները մեկին ճանաչելիս: Թվում էր, այնուամենայնիվ, որ դոն Խուանի կերպարի մյուս կողմում երբեմն թաքնված է մնում մի անզգայացած ռոմանտիկ մի տղամարդ իդեալների կամ անհնարի-նությունների փնտրտուքում: Սովորել և մոռանալ սովորածը, ինչպես նույն մե-



դալի երկու կողմը են վստահորեն շփոթեցնող:

...

Ձեռքերով բռնելով թույնը պրոֆեսորը գիտակցեց, որ իր հետևում սկսվում է ձևավորվել գրեթե խլացողիչ մի աղմուկ հենց իր մեջքի հետևում: Նրան վախ էր պատճառում հետ նայելը, որովհետև հավանաբար կարող էր դեմ առ դեմ հանդիպել նրան, ինչն առավելապես վտանգում էր անգիտակցականը: Բայց իսկապե՞ս միավորվել էին այդ բոլոր ճանձերն իր դեմ: Արագորեն հափշտակեց

սրվակը, որը ձեռքի մեջ էր և գրեթե վայրկենական ռեֆլեքսով պտտելուն պես այն փշրվելով ընկավ գետնին: Ի՞նչ էր նշանակում այդ ամենը:

Ճանձեր չկային. կանայք էին: Հանկարծ մի փոքրիկ ճանձիկ սկսեց ավելի մեծ դառնալ: Ճոճոցի ու մրմնջոցի միջև մի թև դուրս եկավ ճանձի գլխից և հաջորդաբար մնացած ամեն ինչը մի ոտք, մյուսը, ազդրը, գլուխը, կրծքերը, հետույքը, ոտնաթաթերը, ձեռքերը, վիզը, ականջները... Չկար կարգ ու կանոն, փոխարենը մարմնի մասնիկները շարունակաբար ծագում էին ճանձից՝ ասես հրաշագործի գլխարկի միջից: Այդպես նորից ու նորից նույնը տեղի ունեցավ ճանձիկներից շատերի հետ, որոնք իրենց թաթիկներով թառած մնացին պատերին կամ կպած առաստաղին: Որոշները ցած ընկան, և մյուսները թռան վերև, որովհետև ձգողականության կամ ֆիզիկայի օրենքները թվում էր, չէին գործում այդ ժամանակ: Աշխարհը կանգ էր առել և հետևաբար պրոֆեսորի աչքերը նույնպես վերարտադրելու կարիք ունեին և հասկանալու... ուզում էր հասկանալ: Բոլոր կանայք և շատ ուրիշների սիլուետները, որոնց ճանաչել էր վերջին տարիներին, նրան պատկերվում էին օդի մեջ մոտ ու հեռու, խոնարհված, ոտքի ելած, ծնկաչոք, բոլոր դիրքերով ու ձևերով: Այնպես, որ կարծես սենյակի ամբողջ տարածությունը հանկարծ ներխուժված էր իր անցյալով, որից այնքան հեշտ չի եղել փախչելը: Ումանք խոսում էին, այո, ումանք անիծում էին, և մյուսները փորձում էին լինել ըմբոնող. բոլորը նրա հետ խոսում էին մի բանից, որը հենց ինքը կասկածում էր,

Թե կարող է ճշմարիտ լինել՝ լինել լավ կամ վատ, լինել լուրջ կամ գոեհիկ: Բնակարանային ներխուժում էր: Բայց... Ի՞նչ էին անում նրանք բոլորն այդ տեղ: Ի՞նչ էին ուզում իրենից: Ի՞նչ էին փնտրում այդչափ իրացիոնալ կերպով: Իրավունք չունեին մնալու առանց հրավերի: Այնուամենայնիվ, այդտեղ էին:

Այդտեղ էին, որովհետև նրա հիշողության մասն էին: Այդտեղ էին, քանի որ նրանք իրեն շնորհել էին ամբողջ երջանկությունն այն ժամանակ, երբ երբեմն նաև դա գողացել էին իրենից: Այդպես էին մարդիկ հասկանում սերը կապկային ձևով՝ որպես քաջության ու գողության հարց, դրախտների և դժոխքների հարց: Նա դա գիտեր: Լավ էր գիտակցում, որ իր կյանքի մեծագույն պատրանքներն ու հիասթափությունները նրանց են պատկանում դեռևս շատ փոքր տարիքից, շատ խսկ հասակից: Արդեն հասունացել էր, չնայած գուցե չգիտեր էլ ինչ է հասունությունը: Ցանկացած դեպքում նրանք այդտեղ էին, և պատմում էին իրենց հուսահատությունների, բաժանումների մասին՝ ձեռքերը կապած կամ բղավոցների արանքում, լացելով ու նաև լուռ, կատաղած՝ ուրախության պահին և երջանիկ քմծիծաղը դեմքերին:

Իրեն ճնշված զգաց, շատ ճնշված: Սրտի տրոփյունը մատնանշում էր, որ ուր որ է ինքը գրոհի եզրին է՝ անհանգստության, վախի և կամ հասկանալու, թե որն է խնդիրը: Վստահաբար ուներ նման անոթագարկ, որը բոլորս ժամանակ առ ժամանակ ունենում ենք մեր կյանքում, ավելի շուտ, մեր անցյալի հանդեպ՝ դրա հարգանքից ու ակնածանքից, քանի որ մի պահ է գալիս, երբ մեր մարմինը մեզ հաշվետվություն է տալիս, մեզնից մի բան է խնդրում ներքին օրգաններով, մի բան՝ միայն երևակայության ու գառանցանքի աշխարհներում լուծելի: Այնպես որ փորկալով լացեց՝ առանց հասկանալու, թե ինչու: Փորձեց լալ նրանցից մի քանիսի գրկում, բայց նրանք դա մերժեցին, և այդ պատճառով վերջացրեց ծնկները գետնին՝ շրջապատված ճանձերից շատերով, որոնք դեռևս չէին կերպարանափոխվել: Հավանաբար ստանում էր այն, ինչին արժանի էր: Այդ կանանց քե՞ն էր խաղի մեջ, ինչը նրան բերել էր այս թատերաբեմ: Չգիտեր դա: Կարծում էր, որ միշտ լավ է վարվել նրանց հետ: Այնուամենայնիվ, մթնոլորտը ճառագայթում էր գայրույթ ու կատաղություն, կրակ ու վրեժ:

Նա վազեց դեպի պատշգամբը և բացեց պատուհանները՝ գուցե սին հույսով, որ ճանձերը թռչելով դուրս կգային: Բայց այդպես չեղավ: Նրանք չէին թռչում, համենայն դեպս, ոչ սենյակից դուրս: Նրանցից մեկը նետվեց իր վրա: Թոփքի իր իներցիայով նետեց նրան պատկեցրած թիկունքով՝ մահճակալի դեմ: Այժմ նրա վերևում էր, և թվում էր, որ սեր է անում՝ հետը կեղտոտ ու բուռն կերպով: Ի՞նչ էր դա: Հարցնում էր, թե որտեղ է իր հագուստը, ինչպես է այդ ամենը տեղի ունենում նման արագությամբ, բայց, հատկապես՝ ով է նա...

Սրահի սեղանին պատկեցրած բաժակի վրա, որը մոխրաման էր դարձրել, մի օգտագործած իր էր դրված. ծխախոտի մասին է խոսքը՝ կանաչ կախարհանքի, որի մի քանի քաշոցների ծուխն արդեն երկար ժամանակ է, ինչ լքել էր սենյակը:

...

Ի տարի անց
 Պրոֆեսորը փաղաքշում էր ծովափի ավազը, մինչ դրանից մի բուռ պա-
 հում էր մյուս ձեռքում: Թողնում էր, որ հոսեր և նորից հավաքում էր՝ հաջոր-
 դաբար շող տալով մատների արանքով անսահման բաց շագանակագույն
 հատիկները, կարծես այն ավազի ֆանտաստիկ ժամացույցներից էր, որոնք
 միայն հեքիաթներում են հայտնվում: Հիշում էր ծխի ու գառանցանքի այն գի-
 շերը, երբ վերջապես ստիպված եղավ առերեսվել ինքն իր հետ: Չգործածեց ի
 վերջո, թույլը, որովհետև նույնիսկ նրանք իրեն դա թույլ չտվեցին: Ճանձերը
 ողջ թե ոչ, իզական թե անգամ միջատակերպ, իր հետ խոսեցին ամբողջ գիշեր,
 և ինքը լսեց նրանց: Ուշադիր եղավ և նորից չբացեց բերանը՝ ի գավեշտափ
 պաշտպանության իր շահերի: Այն ճանձերը, որոնք կերպարանափոխվեցին
 կանանց, նրան տվեցին մի այլ դաս և անգամ ստիպեցին հասկանալ իր կյան-
 քի ավելի շատ հոգեկան ցավերը, գաղտնիքները, նրանք, որոնք, թվում է,
 ունեն թաթիկներ և թափանցում են դանդաղորեն ժամանակի և օրերի փոփո-
 խությունների միջով: Փոխհատուցում չէր դա, մեղքի առաջին զգացումը չէր և
 ոչ էլ մեքենայացման զգացողություն, որին հասցրել էր կյանքը: Սրանցից ոչ
 մեկը չէր, որ նրան ստիպեցին մտածել ամեն բանի մասին նորովի: Ոչ էլ նույ-
 նիսկ փոխել էր իր կյանքի ոճը: Մտադրություն չունեի այդպիսի բանի, բացա-
 ռությամբ, եթե բախտի բերմամբ կամ պատահաբար մեկ անգամ չգտներ այն,
 ինչը բոլորը փնտրում են: Պարզապես վերանայեց իրողությունները: Սոռազավ
 սովորածը և սովորեց ինքն իրենից, այն փորձառություններից, որոնք հավա-
 քել էր օրը-օրին, տարեցտարի: Նրանցից յուրաքանչյուրը տարբեր բան է



խորհրդանշել իր կյանքում և ունեցել է նշանակություն՝ որքան էլ փոքր կամ աննշանակալի սկզբնապես չթվար: Որևէ մեկն ամբողջովին մակերեսային չէր ու չէր հանգեցնում դատարկության: Ամեն բան անկրկնելի էր: Փորձառությունները՝ նույնիսկ շղթայված մեկը մյուսին, մեր որոշումների մասն են, և մեզ մողելավորում են՝ ասես մենք կավ լինեինք: Մեր բոլոր գործողությունները ինչ-որ բան են լուսավորում մեր ներսում ու նաև մեր շրջապատում, մի մոմ են վառում մեր աչքերում, արձակում են զգացմունքներ, որոնք երբեմն հաստում են մեր գիտակցության սահմանագիծը, որտեղ բնակություն է հաստատում մեր քայլերի անկշռելիությունը: Ամեն բան, ինչ մենք անում ենք, միջամտություն է մեզ շրջապատող աշխարհի վրա, որը վերջում երբեք չի հանգստանում, որովհետև շնչում է, ինչպես կենդանիները, որոնք հաստում են օվկիանոսները ալիքային խոտվության ժամանակ: Այդ ամենը, ամեն բան, բացարձակապես ամեն բան գումարվում է մեր փորձառությանը. բոլոր զգացմունքները, բոլոր ճիշերը, բոլոր ժպիտները, պահերը, սուրճերը, իրիկնամուտները, բոլոր բառերը, ինչպես նաև բոլոր ստերը՝ գիտակցված, թե ոչ: Ի վերջո. սա հենց այն է, ինչը ինքը սովորել էր. ամեն բան հետևանքներ ունի:

Պատշգամբի պատուհանը դեռ բաց էր, և մի քանի փոքրիկ ճանճեր թառեցին օդորակիչի վրա:

Բսպաներենից թարգմանեց Անահիտ Անտոնյան-Մարգարյանը